

ՏԵՂԵԿՈՒՅԹ

2017 թ. 2-րդ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017 թ. 2-րդ կիսամյակում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունում ստացվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց թվով 1172 դիմում և հարցում, որից՝

- 480-ին տրվել է դրական լուծում, որից 71-ը ֆիզիկական և իրավաբանական անձանց հարցումներին տրամադրված տեղեկատվություն է,
- 199-ին տրվել է պարզաբանում բարձրացված խնդրի վերաբերյալ,
- 28-ի առնչությամբ միջնորդություն է ներկայացվել այլ կազմակերպություններ,
- 68-ում բարձրացված խնդրանքներին հնարավոր չի եղել աջակցել (մշակույթի ոլորտին չառնչվելու, մշակույթի նախարարության իրավասություններից դուրս լինելու, աջակցության համար սահմանված ժամկետների խախտման, ինչպես նաև ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով),
- 322-ը տեղեկատվական բնույթի է,
- 34-ն ընթացքի մեջ է,
- 41-ի համար դիմումատուից պահանջվել են լրացուցիչ փաստաթղթեր: